ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ
*ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 5, հեռ.՝ +37411-577-544,*
էլ. հասցե՝ audit@pkfarmenia.com, վեբկայք՝ www.pkfarmenia.com

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Անի Պլազա Հոթել» ՓԲԸ բաժնետերերին

## Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Անի Պլազա Հոթել» ՓԲ ընկերության (այսուհետև՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

## Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության "Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար" բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

## Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի

հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել նրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկման համար:

## Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանն դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

**ք. Երևան, 21.06.2024թ.**

**ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ**

Գլխավոր տնօրեն՝ Գոռ Դավթյան

Որակավորված աուդիտոր՝ Արփինե Խաչատրյան

«ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» "PKF AUDIT SERVICE" 00419022

Անի պլազա հոթել ՓԲԸ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

| | Ծնթ. | 2023թ. հազ. դրամ | 2022թ. հազ. դրամ |
|---|---|---|---|
| Հասույթ | 5 | 1,806,610 | 1,696,422 |
| Ինքնարժեք | 6 | (639,223) | (583,035) |
| **Համախառն շահույթ/(վնաս)** | | 1,167,387 | 1,113,387 |
| Այլ եկամուտ | | 1,486 | 3,203 |
| Վարչական ծախսեր | 7 | (325,330) | (310,709) |
| Իրացման ծախսեր | 8 | (79,729) | (82,494) |
| Այլ ծախսեր | 9 | (1,864) | (2,832) |
| **Գործառնական շահույթ/(վնաս)** | | 761,950 | 720,555 |
| Հիմնական միջոցների օտարումից օգուտ | | - | 495 |
| Ֆինանսական այլ եկամուտ (ծախս) | | 27,233 | (2,041) |
| Ֆինանսական ծախսեր | 10 | - | (569) |
| Փոխարժեքային տարբերություններից օգուտ (կորուստ) զուտ | | 5,955 | (19,615) |
| **Շահույթ/(վնաս) հարկումից առաջ** | | 795,138 | 698,825 |
| Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում | 11 | (144,116) | (128,932) |
| **Տարվա օգուտ** | | 651,022 | 569,893 |
| **Այլ համապարփակ եկամուտ** | | | |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք** | | 651,022 | 569,893 |

Ֆինանսական հաշվետվությունները (էջ 6-30) հաստատվել են ղեկավարության կողմից 2024թ. հունիսի 21-ին:

Արտաշես Թորոյան
Գլխավոր տնօրեն

Լուսինե [illegible]
Փորձառու հաշվապահ

ԱՆԻ ՊԼԱԶԱ ՀՈԹԵԼ ՓԲԸ
**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

| | Ծնթ. | 2023թ. հազ. դրամ | 2022թ. հազ. դրամ |
|---|---|---|---|
| Ակտիվներ | | | |
| **Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Պաշարներ | 12 | 70,133 | 76,927 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 13 | 264,038 | 318,911 |
| Տրված փոխառություններ կապակցված կողմերին | 14 | 480 | 30,583 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 15 | 165,683 | 286,999 |
| | | 500,334 | 713,420 |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 16 | 5,958,066 | 5,136,221 |
| Ոչ նյութական ակտիվներ | | 567 | 478 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | | 11,125 | 12,666 |
| | | 5,969,758 | 5,149,365 |
| **Ընդամենը ակտիվներ** | | 6,470,092 | 5,862,785 |
| **Պարտավորություններ** | | | |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 17 | 243,671 | 287,385 |
| | | 243,671 | 287,385 |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| **Ընդամենը պարտավորություններ** | | - | - |
| **Սեփական կապիտալ** | | | |
| Կանոնադրական կապիտալ | | 1,004,660 | 1,004,660 |
| Վերագնահատման պահուստ | | 4,096,875 | 4,096,875 |
| Կուտակված վնաս/շահույթ | | 651,021 | 323,166 |
| Պահուստային կապիտալ | | 473,865 | 150,699 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | 18 | 6,226,421 | 5,575,400 |
| **Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ** | | 6,470,092 | 5,862,785 |

Արտաշես Թորոյան
Գլխավոր տնօրեն

Լուսինե [illegible]
Փորձա[illegible] հաշվապահ

ԱՆԻ ՊԼԱԶԱ ՀՈԹԵԼ ՓԲԸ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

| | Ծնթ. | 2023թ. հազ. դրամ | 2022թ. հազ. դրամ |
|---|---|---|---|
| Գործառնական գործունեություն | | | |
| Իրացումից մուտքեր | | 2,158,527 | 2,020,819 |
| Այլ մուտքեր | | - | 193 |
| Վճարումներ մատակարարներին | | (1,491,966) | (632,797) |
| Վճարումներ աշխատակիցներին | | (356,173) | (296,106) |
| Վճարումներ հարկերի գծով | | (433,637) | (339,825) |
| Այլ վճարումներ | | (29,360) | (19,226) |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | | **(152,609)** | **733,058** |
| Ներդրումային գործունեություն | | | |
| Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով վճարումներ | | (523) | (192,500) |
| Տրամադրված փոխառությունների մարումից մուտքեր | | 30,230 | 3,176 |
| Տրամադրված փոխառություններ | | (2,980) | (3,060) |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | | **26,727** | **(192,384)** |
| Ֆինանսական գործունեություն | | | |
| Վճարված տոկոսներ | 18 | - | (569) |
| Վճարված շահաբաժիններ | | - | (350,000) |
| Ստացված վարկերի մուտք/ելք, (զուտ) | 18 | - | (18,154) |
| Ստացված տոկոսներ | | 822 | 274 |
| **Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | | | **(368,447)** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ** | | **(126,704)** | **172,227** |
| Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | 5,388 | (19,726) |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ** | | **286,999** | **134,498** |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ** | 15 | 165,683 | **286,999** |

ԱՆԻ ՊԼԱԶԱ ՀՈԹԵԼ
ANI PLAZA HOTEL
01505315

Արտաշես Թորոյան
Գլխավոր տնօրեն

Լուսինե Մովսիսյան
Փորձագետ հաշվապահ

ԱՆԻ ՊԼԱԶԱ ՀՈԹԵԼ ՓԲԸ

Սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

| | Կանոնադրական կապիտալ<br>հազ. դրամ | Վերագնահատման պահուստ<br>հազ. դրամ | Սեփական կապիտալի այլ տարրեր<br>Հազ. դրամ | Կուտակված վնաս/շահույթ<br>հազ. դրամ | Պահուստային կապիտալ<br>հազ. դրամ | Ընդամենը սեփական կապիտալ<br>հազ.դրամ |
|---|---|---|---|---|---|---|
| 01.01.2022թ. դրությամբ | 1,004,660 | 4,096,875 | - | (7,092) | 150,699 | 5,245,142 |
| Տարվա շահույթ | - | - | | 569,893 | | 569,893 |
| Շահաբաժիններ | | | | (239,635) | | (239,635) |
| 31.12.2022թ. դրությամբ | 1,004,660 | 4,096,875 | - | 323,166 | 150,699 | 5,575,400 |
| 01.01.2023թ. դրությամբ | 1,004,660 | 4,096,875 | - | 323,166 | 150,699 | 5,575,400 |
| Ներքին տեղաշարժ | | | | (323,166) | 323,166 | |
| Տարվա շահույթ | - | - | | 651,022 | | 651,022 |
| Շահաբաժիններ | | | | | | |
| 31.12.2023թ. դրությամբ | 1,004,660 | 4,096,875 | - | 651,022 | 473,865 | 6,226,422 |

ԱՆԻ ՊԼԱԶԱ ՀՈԹԵԼ
ANI PLAZA HOTEL
01505315

Արտաշես Թորոյան
Գլխավոր տնօրեն

Լուսինե Մովսիսյան
Փորձագետ հաշվապահ

Բովանդակություն

1. Ընկերության մասին ........ 11
2. Պատրաստման հիմքերը........ 11
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ........ 12
4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում ........ 13
5. Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ ........ 18
7. Վարչական ծախսեր ........ 18
8. Իրացման ծախսեր ........ 19
9. Այլ ծախսեր........ 19
10. Ֆինանսական ծախսեր ........ 19
11. Շահութահարկ........ 19
12. Պաշարներ ........ 19
13. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր........ 20
14. Տրված փոխառություն ........ 20
15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ........ 20
16. Հիմնական միջոցներ ........ 21
17. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր ........ 22
18. Սեփական կապիտալ ........ 22
19. Կապակցված կողմեր ........ 23
20. Պայմանական պարտավորություններ ........ 24
21. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր ........ 25
22. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն ........ 25

## 1. Ընկերության մասին

<u>Ընկերությունը և նրա հիմնական գործունեությունը</u>

«Անի պլազա հոթել» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետև Ընկերություն) հիմնադրվել է 1996թ. օգոստոսի 1-ին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
Ընկերության հիմնական գործունեությունը հյուրանոցային ծառայությունն է, ինչպես նաև հասարակական սննդի կազմակերպումը հյուրանոցի ներսում՝ հյուրանոցի հյուրերի համար :

Ընկերության գրանցման հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա պողոտա 19:

<u>Բաժնետերերը</u>

Ընկերության 100% բաժնեմասերի սեփականատերն է ՀՀ քաղաքացի Գենիկ Խաչիկի Կարապետյանը:
Կապակցված կողմերի հետ գործարքները մանրամասն ներկայացված են Ծանոթագրություն 19-ում:
Ընկերության աշխատողների թվաքանակը 31.12.2023թ.-ին կազմել է 128 (2022թ.՝ 119):

<u>Գործարար միջավայր</u>

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գնահատականն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:
Կորոնավիրուսի նոր տեսակի (COVID-19) լայն աշխարհագրական տարածումն էական ազդեցություն է ունեցել Հայաստանի տնտեսության վրա: Համավարակի ազդեցությունը դեռևս շարունակվում է, ինչպես նաև խնդրի լուծման համար ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը դեռևս մնում է անորոշ:
Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը նույնպես շարունակում է մնալ անկայուն՝ հաշվի առնելով 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հետևանքները և ընթացիկ տարաձայնությունները տարածքների սահմանազատման մասով: Վերոհիշյալ քաղաքական և տնտեսական գործոնների ազդեցությունը հանգեցրին ներդրողների ընդհանուր տրամադրությունների նվազմանը և ֆինանսական շուկաներում անորոշության և խոցելիության աճին:
Այսպիսի գործառնական միջավայրն էական ազդեցություն ունի Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ իր գործունեության կայունությունն ապահովելու նպատակով, այդուհանդերձ ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից՝ Ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ընկերության հետագա տարիների ֆինանսական վիճակի վրա:

## 2. Պատրաստման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 22-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Հայաստանի Հանրապետության դրամական միավորով (ՀՀ դրամ), որը նաև Ընկերության գործառնական արժույթն է:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն՝ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

**Չափման հիմքերը**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ հողամասերի, որոնք չափվել են իրական (վերագնահատված) արժեքով (Ծնթ. 16-ը):

**Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ**

ա) 2022թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

Առկա չեն 2022թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք նշանակալի ազդեցություն Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

բ) Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՍ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ

Առկա չեն հրապարակված, սակայն դեռ ուժի մեջ չմտած, նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք կունենան կամ հնարավոր է ունենան ազդեցություն Կազմակերպության հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

## 3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

<u>**Գնահատումներ և ենթադրություններ**</u>

**Անընդհատության սկզբունք**

Ընկերության կուտակված շահույթը կազմել է 651,021 հազ. դրամ (31.12.2022թ. դրությամբ՝ 323,166 հազ դրամ):
Ընկերության ղեկավարությունը ունի հիմնավորված ակնկալիք, որ Ընկերությունը կարող է շարունակել իր գործառնական գործունեությունը տեսանելի ապագայում: Ուստի Ընկերությունը շարունակում է որդեգրել անընդհատության սկզբունքը իր ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով:

**Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ**

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները հիմնված են ղեկավարության գնահատականների վրա և կարող են հետագայում փոփոխվել (տես Ծնթ. 22-ը)։ Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության ղեկավարությունը վերանայում և անհրաժեշտության դեպքում փոփոխում է հիմնական միջոցների մնացորդային օգտակար ծառայության ժամկետների վերաբերյալ գնահատումները։

**Իրական արժեքի չափում**

Ընկերության ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում ներառված մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջում են չափումներ իրական արժեքով և/կամ իրական արժեքի բացահայտումով։

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափումը հնարավորինս հիմնվում է դիտարկելի շուկայից ստացվող ելակետային տվյալների վրա։ Իրական արժեքի չափումները սահմանելու համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող արդյունքները դիտարկելի («իրական արժեքի աստիճանակարգ»)։

- Մակարդակ 1. Նույն ակտիվների կամ պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված)
- Մակարդակ 2 .Դիտարկելի ուղղակի կամ անուղղակի ելակետային տվյալներ, Մակարդակ 1-ի տվյալներից տարբեր
- Մակարդակ 3։ Ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա)

Իրական արժեքների աստիճանակարգում այն մակարդակը, որին դասվում է իրական արժեքի չափումը, պետք է որոշվի ամենացածր մակարդակի ելակետային տվյալի հիման վրա, որը նշանակալի է ամբողջությամբ վերցրած իրական արժեքի չափման համար։ Իրական արժեքի տեղափոխությունները մի մակարդակից դեպի մյուսը ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի են ունենում այդ տեղափոխությունները։

**4. Ֆինանսական գործիքներ – ռիսկերի կառավարում**

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Արտարժութային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին։ Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները։ Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ։

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել։

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Առևտրային դեբիտորական պարտքեր,
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ,
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր,
- Տրամադրված փոխառություններ կապակցված կողմերին:

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ դասերի

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ խմբերին.

| **Ֆինանսական ակտիվներ** | **Ամորտիզացված արժեքով չափվող** | |
|---|---|---|
| | **2023թ.** | **2022թ.** |
| | **հազ. դրամ** | **հազ. դրամ** |
| Տրամադրված փոխառություններ | 480 | 30,583 |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 206,273 | 318,911 |
| Դրամական միջոցներ | 165,683 | 286,999 |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | 372,436 | 636,493 |

| **Ֆինանսական պարտավորություններ** | **Ամորտիզացված արժեքով չափվող** | |
|---|---|---|
| | **2023թ.** | **2022թ.** |
| | **հազ. դրամ** | **հազ. դրամ** |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 26,610 | 23,928 |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | 26,610 | 23,928 |

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, ինչպես նաև փոխառությունները:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների, առևտրային դեբիտորական պարտքերի, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի, փոխառությունների հաշվեկշռային արժեքը մոտարկում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Հավելված 1-ում ներկայացվում է տեղեկատվություն՝ իրական արժեքի աստիճանակարգի, գնահատման մեթոդների և՝ իրական արժեքի աստիճանակարգի մակարդակ 3-ում դասակարգված ֆինանսական գործիքների իրական արժեքի որոշման հետ կապված այլ նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալների մասին:

**Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ**

Ընկերության նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով նրա մրցունակության և ճկունության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկն է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Ընկերությունը ենթարկվում է Պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է ապառիկ վաճառքից: Ընկերությունը որդեգրել է նախքան հաճախորդի հետ պայմանագիր կնքելը վարկային ռիսկը գնահատելու քաղաքականություն, որը իրականացվում է տեղական մակարդակով: Վարկային նման վարկանիշները հաշվի են առնվում տեղական բիզնես գործունեության ոլորտում:
Նախքան նոր հաճախորդին պայմաններ առաջարկելը, ստուգվում է վերջինիս վարկունակությունը: Ընկերության ստուգումները ներառում են առկա արտաքին վարկանիշների և որոշ դեպքերում բանկային տեղեկանքների ստուգում: Յուրաքանչյուր հաճախորդի համար սահմանվում են ձեռքբերման գծով սահմանափակումներ, որոնք ներառում են տարաժամկետ վճարմամբ վաճառքների թույլատրելի առավելագույն գումարը:

Տնօրենը որոշում է վարկային ռիսկի կենտրոնացումը՝ եռամսյակային կտրվածքով ստուգելով ընթացիկ հաճախորդների վարկունակության վարկանիշը, ինչպես նաև ամսական կտրվածքով անցկացնելով առևտրային դեբիտորական պարտքերի ժամկետայնության վերլուծություն: Հաճախորդի պարտքային ռիսկերը ստուգելիս հաճախորդները դասակարգվում են ըստ վարկային բնութագրերի: Կազմվում է «բարձր ռիսկային» հաճախորդների ցուցակ, որում ընդգրկված հաճախորդներին ապառիկ վաճառքն իրականացվում է միայն Ընկերության սեփականատիրոջ հաստատմամբ:

Պարտքային ռիսկն առաջանում է նաև դրամական միջոցների և դրանց համարժեքների և բանկերում տեղաբաշխված ավանդների գծով: Ընկերության համար ընդունելի են միայն բարձր վարկանիշ ունեցող տեղական բանկերը:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի վերաբերյալ բացահայտումները, որոնք ներկայացված են Ծնթ. 13-ում:

<u>Դրամական միջոցներ բանկերում</u>

Ջգալի դրամական միջոցներ պահվում են հետևյալ հաստատություններում՝

| | 2023թ.<br>հազ. դրամ | 2022թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Բանկ 1 | 86,894 | 142,274 |
| Բանկ 2 | 47,805 | 89,418 |
| Բանկ 3 | 9,674 | 41,941 |
| Բանկ 4 | 23 | 23 |
| Բանկ 5 | 5,853 | 749 |
| **Ընդամենը** | **150,249** | **274,405** |

Վերը նշված ֆինանսական հաստատությունները չեն վարկանշվել միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից: Ղեկավարությունը իր միջոցների տեղաբաշխման համար գործընկերների ընտրության գործում հիմնվում է տեղական շուկայում գործող ֆինանսական հաստատությունների իր կողմից կատարված վերլուծությունների վրա: Ղեկավարությունը կանոնավոր կերպով ստուգում է գործընկերների վարկանիշները: Հաշվետու ամսաթվի դրությամբ գործընկերների պարտականությունների չկատարման հետևանքով առաջացող վնասներ չեն ակնկալվում:

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկն առաջանում է, երբ Ընկերության առանձին կազմակերպությունների գործարքներն արտահայտված չեն վերջիններիս գործառնական արժույթով: Ընկերության քաղաքականության համաձայն՝ թույլատրվում է Ընկերության գործառնական արժույթով պարտավորությունները հնարավորության դեպքում գործընկերներին մարել տվյալ արժույթով արտահայտված գործարքներից ստացված դրամական միջոցներով:

Սույն քաղաքականության շարունակական արդյունավետությունը վերահսկելու համար ղեկավարությունն ստանում է մարման ենթակա պարտավորությունների և ապագա դրամական միջոցների պահուստի գծով ամսական կանխատեսում՝ ըստ Ընկերության հիմնական արժույթների:

Ընկերության արտարժութային ռիսկը հիմնականում առաջանում է մատակարարների կողմից կատարված ձեռքբերումներից կամ մատուցած ծառայություններից, բանկերում պահվող դրամական միջոցներից:
Դրամական միջոցների հոսքերից բացի, Ընկերությունը պլանավորում է նաև ֆինանսավորել համապատասխան արժույթով արտահայտված ծախսերը և արտարժութային ռիսկի տեղական մակարդակով կառավարել ներդրումները՝ համապատասխանեցնելով արժույթը, որով արտահայտված են հասույթը և ծախսերը:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության զուտ ենթակայությունը արտարժութային ռիսկերին ներկայացված է ստորև՝

| | 31.12.2023 հազ. դրամ | | | 31.12.2022 հազ. դրամ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | Եվրո | ՌԴ ռուբլի | ԱՄՆ դոլար | Եվրո | ՌԴ ռուբլի |
| Մնացորդներ բանկերում | 185 | 16 | 43 | 311 | | |
| **Զուտ դիրք** | 185 | 16 | 43 | 311 | | |

Արտարժութային ֆինանսական գործիքները ՀՀ դրամով չափելու նպատակով Ընկերությունն օգտագործել է հաշվետու ամսաթվի դրությամբ գործող ՀՀ կենտրոնական բանկի հետևյալ փոխարժեքները՝ 447.90 ՀՀ դրամ 1 եվրոյի դիմաց (2022թ.՝ 420.06 ՀՀ դրամ 1 եվրոյի դիմաց) և 404.79 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց (2022թ.՝ 393.57 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց):

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 5% արժեզրկման ազդեցությունը ԱՄՆ դոլարով արտահայտված ֆինանսական գործիքների վրա (այլ տվյալների անփոփոխ մնալու դեպքում) կհանգեցներ տարվա շահույթի (հարկումից առաջ) և զուտ ակտիվների 3,744 հազ. դրամով (2022թ.՝ 6,120 հազ. դրամ) աճի, իսկ 5% արժևորման ազդեցությունը՝ տարվա շահույթի (հարկումից առաջ) և զուտ ակտիվների նվազման նույն չափով:

**Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող սեփական միջոցների կառավարումից, ֆինանսական վճարներից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

Համաձայն Ընկերության քաղաքականության՝ Ընկերությունը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ (կամ համաձայնեցված միջոցներ), որպեսզի ողջամիտ ժամկետում կարողանա մարել սահմանված պարտավորությունները:

Ղեկավարությունն ստանում է 12 ամսվա դրամական միջոցների հոսքերի գծով ամսական կանխատեսումներ, ինչպես նաև մանրամասներ դրամական միջոցների մնացորդների մասին: Համաձայն հաշվետու տարեվերջի դրությամբ կատարված վերոնշյալ կանխատեսումների՝ ֆինանսական տարվա ընթացքում Ընկերությունը կունենա բավարար միջոցներ՝ ակնկալվող ողջամիտ ժամկետներում պարտավորությունները մարելու համար:

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորությունների (չզեղչված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

| | Մինչև 3 ամիս | 3-ից 6 ամիս | 6-ից 12 ամիս | 1-ից 5 տարի | 5 տա բուց ավելի |
|---|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ |
| **2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | | | | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 51,029 | 130,837 | 20,892 | 40,913 | - |
| Վարկեր և փոխառություններ | | | | - | - |
| | | | | - | - |

| | Մինչև 3 ամիս | 3-ից 6 ամիս | 6-ից 12 ամիս | 1-ից 5 տարի | 5 տա բուց ավելի |
|---|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ |
| **2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | | | | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 17,462 | 164,426 | 42,169 | - | - |
| Վարկեր և փոխառություններ | - | - | - | - | - |
| | 17,462 | 164,426 | 42,169 | - | - |

Կապիտալի վերաբերող բացահայտումներ

Ընկերությունը կառավարում է իր կապիտալն՝ ապահովելու Ընկերության գործունեության անընդհատության սկզբունքը միևնույն ժամանակ առավելագույնի հասցնելով շահագրգիռ կողմերի հատույցը ներգրավված և սեփական միջոցների մնացորդների օպտիմալացման ճանապարհով: Ընկերության կապիտալը ներառում է սեփական կապիտալի բոլոր տարրերը (այն է՝ կանոնադրական կապիտալ, էմիսիոն եկամուտ, չվերահսկող բաժնեմաս, չբաշխված եկամուտ և վերագնահատման պահուստ), բացի դրամական միջոցների հոսքերի հեջավորման գծով պահուստի գումարներից:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալն այնպես, որ

- Կազմակերպությունը կարողանա շարունակել իր գործունեությունը տեսանելի ապագայում (գործունեության անընդհատությունը)՝ բաժնետերերի և այլ շահառուների համար ապահովելով եկամուտներ և հատուցումներ,

- Կազմակերպությունը կարողանա բաժնետերերի համար ապահովել պատշաճ եկամուտ՝ ապրանքների և ծառայությունների գները սահմանելով ռիսկի մակարդակին համապատասխան:

Ընկերությունը սահմանում է անհրաժեշտ կապիտալի չափը գնահատված ռիսկերին համապատասխան: Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ՝ տնտեսական պայմանների փոփոխություններին և ակտիվների ռիսկերի բնույթին համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Ընկերությունը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվող շահաբաժինների չափը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր կամ պարտքը նվազեցնելու նպատակով վաճառել ակտիվները:
Ընկերությունն իրականացնում է կապիտալի նկատմամբ հսկողություն՝ պարտքի և ճշգրտված կապիտալի հարաբերակցության սկզբունքով: Սույն հարաբերակցությունը հաշվարկվում է որպես զուտ պարտքը՝ բերած ճշգրտված կապիտալին: Զուտ պարտքը իրենից ներկայացնում է ընդհանուր պարտքը հանած դրամական միջոցների մնացորդը:

| | 2023թ. հազ. դրամ | 2022թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Վարկեր, փոխառություններ | - | - |
| Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | (165,683) | (286,999) |
| Զուտ | (165,683) | (286,999) |
| Ընդհանուր սեփական կապիտալ | 6,226,421 | 5,575,400 |
| Պարտքի և ճշգրտված կապիտալի հարաբերակցություն | 0.03 | 0,05 |

## 5. Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Ընկերությունն իր հասույթը տարանջատել է ըստ հետևյալ խմբերի.

| | 2023թ. հազ. դրամ | 2022թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Հյուրանոցային ծառայություններ | 1,698,216 | 1,575,707 |
| Ապրանքների վաճառք | 717 | 3,805 |
| Գործառնական վարձակալությունից վարձակալական վճար | 107,677 | 116,910 |
| | **1,806,610** | **1,696,422** |

Ստորև բերվող աղյուսակում պատվիրատուների հետ պայմանագրերից հասույթը ներկայացված է ըստ հիմնական աշխարհագրական շուկաների:

| | 2023թ. հազ. դրամ | 2022թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Հայաստանի Հանրապետություն | 1,806,610 | 1,696,422 |
| **Ընդամենը հասույթ** | 1,806,610 | 1,696,422 |

## 6. Ինքնարժեք

| | 2023թ. հազ. դրամ | 2022թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Մատուցված հյուրանոցային ծառայությունների ինքնարժեք (ա) | (639,135) | (580,132) |
| Ապրանքների վաճառք (բ) | (88) | (2,903) |
| | **(639,223)** | **(583,035)** |

**ա) Մատուցված հյուրանոցային ծառայությունների ինքնարժեք**

| | 2023թ. հազ. դրամ | 2022թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Հյուրանոցային համարներ | (425,485) | (390,115) |
| Խոհանոց | (159,439) | (143,856) |
| Մարզասրահ | (24,079) | (24,420) |
| Անձնակազմ | (13,012) | (12,528) |
| Այլ ծախսեր | (17,120) | (9,213) |
| | (639,135) | (580,132) |

**բ) Ապրանքների վաճառքի ինքնարժեք**

| | 2023թ. հազ. դրամ | 2022թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Նյութածախս | (88) | (2,903) |
| | (88) | (2,903) |

## 7. Վարչական ծախսեր

| | 2023թ. հազ. դրամ | 2022թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Անձնակազմի վարձատրություն | (160,002) | (161,617) |
| Բանկային և ապահովագրական ծախսեր | (18,384) | (15,145) |
| Աուդիտի և խորհրդատվության գծով ծախսեր | (1,920) | (15,860) |
| Գրասենյակային և կոմունալ ծախսեր | (57,803) | (64,406) |
| Գործուղման և ներկայացուցչական | (1,761) | (1,266) |
| Մաշվածություն և ամորտիզացիա | (12,995) | (13,049) |
| Փոստի և հեռահաղորդակցության գծով ծախսեր | (11,463) | (10,861) |
| Չփոխհատուցվող հարկերից ծախսեր | (11,935) | (9,639) |
| Այլ | (49,067) | (18,866) |
| | (325,330) | (310,709) |

8. Իրացման ծախսեր

| | 2023թ.<br>հազ. դրամ | 2022թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Անձնակազմի վարձատրություն | (29,079) | (26,012) |
| Կոմիսիոն ծախսեր | (41,664) | (47,618) |
| Մաշվածություն և ամորտիզացիա | (8,319) | (8,239) |
| Մարքեթինգ և գովազդ | (667) | (625) |
| | (79,729) | (82,494) |

9. Այլ ծախսեր

| | 2023թ.<br>հազ. դրամ | 2022թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Դեբիտորական պարտքերի պահուստի գծով ծախսեր | (157) | 21 |
| Արժեքների պակասորդներից և փչացումից կորուստներ | (951) | 747 |
| Տուգանքների և տույժերի գծով ծախսեր | (417) | 1,086 |
| Այլ ծախսեր | (339) | 978 |
| | (1,864) | 2,832 |

10. Ֆինանսական ծախսեր

| | 2023թ.<br>հազ. դրամ | 2022թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Տոկոսային ծախսեր վարկերի գծով | - | 569 |
| | - | 569 |

11. Շահութահարկ

**Շահութահարկի գծով ծախս / (փոխհատուցում)**

| | 2023թ.<br>հազ. դրամ | 2022թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| **Ընթացիկ շահութահարկ** | | |
| Ընթացիկ հարկի գծով ծախս | (137,093) | (133,151) |
| **Հետաձգված շահութահարկ** | | |
| Ժամանակավոր տարբերությունների ծագում և հակադարձում<br>Հարկային վնասներ | (7,023) | 4,219 |
| | (144,116) | (128,932) |

Հաշվետու տարվա համար ՀՀ հարկային օրենսգրքով շահութահարկի դրույքաչափը սահմանված է 18% (2022թ.՝ 18%)։

12. Պաշարներ

| | 2023թ.<br>հազ. դրամ | 2022թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Շինանյութ | 28,789 | 24,352 |
| Ապրանքներ | 21,264 | 39,396 |
| Վառելիք | 1,988 | 1,890 |
| Պահեստամասեր | 509 | 515 |
| Այլ պաշարներ | 17,583 | 10,774 |
| | 70,133 | 76,927 |

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը արժեզրկված պաշարներ չունի։

## 13. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

| | 2023թ. հազ. դրամ | 2022թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 214,156 | 218,879 |
| Հանած՝ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը | (7,883) | (7,729) |
| Առևտրային դեբիտորական պարտքեր, զուտ | 206,273 | 211,150 |
| **Ընդամենը ամորտիզացված արժեքով չափով ֆինանսական ակտիվներ** | 206,273 | 211,150 |
| Տրված կանխավճարներ (ա) | 53,979 | 103,985 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 3,786 | 3,776 |
| | 264,038 | 318,911 |

(ա) Տրված կանխավճարներն իրենցից ներկայացնում են ընկերության պատվերով իրականացվող շինարարական աշխատանքներում ներգրավված կապալառու կազմակերպություններին, ինչպես նաև այլ մատակարարներին տրված կանխավճարները: Կանխավճարները մարվելու են հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում կապալառու կազմակերպությունների կատարված աշխատանքների համամասնորեն, ձեռքբերված պաշարների և ծառայությունների չափով:

## 14. Տրված փոխառություն

| | 2023թ. հազ. դրամ | 2022թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Տրված փոխառություն | 480 | 30,583 |
| | 480 | 30,583 |

## 15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| | 2023թ. հազ. դրամ | 2022թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Ընթացիկ հաշիվներ բանկերում (արտարժույթ) | 82,214 | 122,273 |
| Ընթացիկ հաշիվներ բանկերում (ՀՀ դրամ) | 68,034 | 152,131 |
| Դրամական միջոցներ ճանապարհին | 1,212 | 1,515 |
| Դրամական միջոցներ դրամարկղներում | 14,223 | 11,080 |
| **Ընդամենը դրամական միջոցներ** | 165,683 | 286,999 |

## 16. Հիմնական միջոցներ

| | Շենքեր և կառուցվածքներ | Մեքենաներ և սարքավորում | Տրանսպորտային միջոցներ | Սարքեր և հարմարանքներ | Հողամասեր | Օգտագործման համար ոչ մատչելի, անավարտ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Սկզբնական կամ վերագնահատված արժեք** | | | | | | | |
| **Մնացորդն առ 01.01.2022թ.** | 2,748,935 | 171,605 | 33,813 | 585,549 | 4,108,021 | 26,111 | 7,674,034 |
| Ավելացումներ,ներքին շարժ | 18,664 | - | - | 9,037 | 160,000 | 77,613 | 265,314 |
| Օտարումներ | (4,256) | (2,626) | - | (55,606) | - | (11,220) | (73,708) |
| **Մնացորդն առ 31.12. 2022թ.** | 2,763,343 | 168,979 | 33,813 | 538,980 | 4,268,021 | 92,504 | 7,865,640 |
| Ավելացումներ | 19,955 | | | 24,695 | 30,951 | 836,436 | 912,037 |
| Ներքին շարժ | | | | 3,271 | | (3,271) | - |
| Օտարումներ, դուրս գրումներ | (2,905) | (25) | | (15,648) | | (27,689) | (46,267) |
| **Մնացորդն առ 31.12.2023թ.** | 2,780,393 | 168,954 | 33,813 | 551,298 | 4,298,972 | 897,980 | 8,731,410 |
| **Կուտակված մաշվածություն** | | | | | | | |
| **Մնացորդն առ 01.01.2022թ.** | 1,942,075 | 159,746 | 33,181 | 513,261 | - | 10,617 | 2,658,880 |
| Տարվա ծախս | 57,441 | 7,557 | 632 | 24,374 | - | 49,079 | 139,083 |
| Օտարումներ,ներքին տեղաշարժ | (4,256) | (2,626) | | (54,135) | | (7,527) | (68,544) |
| **Մնացորդն առ 31.12.2022թ.** | 1,995,260 | 164,677 | 33,813 | 483,500 | - | 52,169 | 2,729,419 |
| Տարվա ծախս | 58,507 | 4,302 | - | 23,881 | | 438 | 87,128 |
| Ներքին տեղաշարժ | | | | (1,308) | | 1,308 | - |
| Օտարումներ, դուրս գրումներ | (2,905) | (25) | | (13,021) | | (27,252) | (43,203) |
| **Մնացորդն առ 31.12.2023թ.** | 2,050,862 | 168,954 | 33,813 | 493,052 | | 26,663 | 2,773,344 |
| **Զուտ հաշվեկշռային արժեք** | | | | | | | |
| Մնացորդն առ 01.01.2022թ. | 806,860 | 11,859 | 632 | 72,288 | 4,108,021 | 15,494 | 5,015,154 |
| Մնացորդն առ 31.12.2022թ. | 768,083 | 4,302 | - | 55,480 | 4,268,021 | 40,335 | 5,136,221 |
| **Մնացորդն առ 31.12.2023թ.** | 729,531 | - | - | 58,246 | 4,298,972 | 871,317 | 5,958,066 |

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ամբողջությամբ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմել է 1,096,631 հազ. դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 913,862 հազ. դրամ):

**Իրական արժեքի չափում (վերագնահատված գույք)**

Որպես հիմնական միջոցներ դասակարգված հողամասը գնահատվել է 2014թ.-ին արտաքին անկախ գնահատողի կողմից (2023թ. դեկտեմբերի 31-ին գնահատման անհրաժեշտություն չի առաջացել, քանի որ անշարժ գույքի շուկայական արժեքի էական փոփոխություններ չեն եղել):

Հողամասերի և շենքերի իրական արժեքը դասակարգվել է իրական արժեքի կրկնվող չափումների 3-րդ մակարդակում:

Իրական արժեքի չափումը հիմնված է վերոնշյալ հողվածների առավելագույն և լավագույն օգտագործման վրա, որը չի տարբերվում նրանց փաստացի օգտագործումից:

## 17. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

| | 2023թ. հազ. դրամ | 2022թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 26,610 | 23,928 |
| Կրեդիտորական պարտքեր կապակցված կողմերից | - | - |
| **Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ, բացառությամբ՝ վարկերի և փոխառությունների** | 26,610 | 23,928 |
| Ստացված կանխավճարներ (ա) | 7,233 | 17,245 |
| Աշխատավարձ և արձակուրդային վճարումների գծով պահուստ | 61,805 | 63,328 |
| Վճարվելիք հարկեր և այլ պարտավորություններ | 130,837 | 162,736 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 17,186 | 20,148 |
| | 243,671 | 287,385 |

ա) Ստացված կանխավճարները մարվել են ընթացիկ տարում կատարված շինարարական աշխատանքների և մատուցված ծառայությունների ծավալներին համապատասխան:

## 18. Սեփական կապիտալ

**Բաժնետիրական կապիտալ**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող կապիտալը կազմում է 1,004,600 հազ. դրամ և պատկանում է 1 մասնակցի (Ծնթ. 1):

Սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության ժողովներում:

**Շահաբաժիններ**

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են ՖՀՄՍ-ների համաձայն Ընկերության պատրաստած ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով:
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շահաբաժիններ չեն հայտարարվել (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարվել են և վճարվել 239,635,358 դրամի շահաբաժիններ):

## 19. Կապակցված կողմեր

Ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը իրականցրել է հետևյալ գործարքները կապակցված կողմերի հետ.

| | 2023<br>հազ. դրամ | 2022<br>հազ. դրամ |
|---|---|---|
| **ա) Գործարքներ ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունների հետ** | | |
| Ապրանքների, ծառայությունների ձեռքբերում | 30,775 | 64 822 |
| Ապրանքների, ծառայությունների վաճառք | 318 | |
| **բ) Մնացորդներ առևտրային գործարքներից մասնակիցների հետ** | | |
| Կրեդիտորական պարտքեր | - | - |
| **գ) Մնացորդներ առևտրային գործարքներից ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունների հետ** | | |
| Կրեդիտորական պարտքեր | - | 4 488 |
| Տրված կանխավճարներ | | |
| **դ) Փոխառություններ կապակցված կողմերին կամ կապակցված կողմերից** | | |
| Փոխառություններ մասնակիցներից | - | - |
| Տրված Փոխառություններ ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններին | - | 30,000 |

**ե) Գործարքներ ղեկավարության հետ**

Հիմնական ղեկավար անձնակազմը հաշվետու ժամանակաշրջանում ստացել է վարձատրություն միայն աշխատավարձ և դրան հավասարեցված վճարների տեսքով, ընդհանուր 12,384 հազ. դրամ (2022թ. 12,610 հազ. դրամ):

## 20. Պայմանական պարտավորություններ

**Ֆինանսական երաշխիքներ**

Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական երաշխիքներ չի ունեցել:

**Ապահովագրություն**

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Ընկերության գույքը ապահովագրված չէ: Այն ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց առաջացած Ընկերության տարածքում տեղի ունեցած պատահարներից կամ նրա գործունեությունից հասցված վնասից: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ էական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

**Իրավական պարտավորություններ**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական վիճակի վրա:

**Հարկային պարտավորություններ**

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

2020թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է տրանսֆերային գնագոյացման օրենսդրությունը: Օրենսդրությունը գործում է 2020թ. և հաջորդ տարիների համար: Տրանսֆերային գնագոյացման տեղական կանոնները համահունչ են ՏՀԶԿ ուղեցույցներին, սակայն որոշակի հանգամանքներում առկա է անորոշություն հարկային օրենսդրության գործնական կիրառման հետ կապված:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները կիրառելի են ստորև ներկայացված գործարքների նկատմամբ, եթե վերահսկվող գործարքի հանրագումարը հարկային տարում գերազանցում է 200 միլիոն դրամը.

- միջսահմանային գործարքներ կապակցված կողմերի միջև,
- միջսահմանային գործարքներ օֆշորային գոտիներում գրանցված ընկերությունների հետ անկախ կապակցված կողմ լինելու հանգամանքից,
- կապակցված կողմերի միջև երկրի ներսում իրականացվող որոշ գործարքներ, որոնք սահմանված են 22 հարկային օրենսգրքով:

Քանի որ հարկային մարմինները և դատարանները չունեն տրանսֆերային գնագոյացման կանոնների կիրառման փորձ, դժվար է կանխատեսել տրանսֆերային գնագոյացման նոր կանոնների ազդեցությունն այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի

մեծ ռիսկեր։ Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա։ Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները։

## 21. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

**Ռազմական գործողություններ Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև**

2022թ. փետրվարի 24-ին Ռուսաստանը ռազմական գործողություններ սկսեց Ուկրաինայի դեմ: Ռուսաստանին դիմագրավելու նպատակով ԵՄ-ն, ԱՄՆ-ը և աշխարհի շատ երկրներ տնտեսական և քաղաքական պատժամիջոցներ են հայտարարել և կիրառում, որի արդյունքում Ռուսաստանի տնտեսությունը նշանակալի խնդիրների առաջ է հայտնվել: Ներկայումս պատերազմի ընթացքը և պատժամիջոցների ազդեցության հետևանքների ծավալը անկանխատեսելի են:

Հաշվի առնելով Հայաստանի տնտեսության և ներդրումային դաշտի համար Ռուսաստանի քաղաքական և տնտեսական ազդեցությունը, ինչպես նաև այն, որ Հայաստանը ԵԱՏՄ կառույցի անդամ է, ստեղծված իրավիճակն անուղղակիորեն կարող է ազդել Հայաստանի ֆինանսական և տնտեսական համակարգերի կայունության վրա:

Մինչև այժմ շարունակվող գործողությունները էական ազդեցություն ունեն ամբողջ աշխարհի ֆինանսական և ներդրումային դաշտի վրա, մասնավորապես՝ արտարժութային փոխարժեքների տատանումները և ստեղծված անորոշությունը կարող է ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վրա:

Հաշվի առնելով նշված հանգամանքների և նրանց ազդեցության անկանխատեսելիությունը՝ Ընկերությունն այս պահին դժվարանում է գնահատել վերջինիս ազդեցությունն իր հետագա գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի և իրացվելիության վրա:

**Պատերազմական գործողություններ Հայաստանի Հանրապետության սահմանին**

2022թ. սեպտեմբերի 13-ին Ադրբեջանը սկսեց լայնածավալ մարտական գործողություններ Հայաստանի Հանրապետության սուվերեն տարածքի ուղղությամբ։ Սեպտեմբերի 16-ին ժամանակավոր հրադադար հայտարարելուց հետո պարբերաբար տեղի են ունենում հարձակումներ։ Բանակցային գործընթացներն ընթացքի մեջ են, և Ընկերությունն այս պահին դժվարանում է գնահատել վերջինիս ազդեցությունն իր հետագա գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի և իրացվելիության վրա:

## 22. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

**Հասույթի ճանաչում**

Ընկերության ճանաչում է եկամուտը հետևյալ հիմնական աղբյուրներից՝

- Հյուրանոցային ծառայություններ,
- Տարածքների վարձակալություններ

Հյուրանոցային ծառայություններից հասույթ

Ընկերության պատկանող հյուրանոցում Ընկերությունն ունի պարտավորություններ հյուրանոցային և այլ օժանդակ ծառայություններ տրամադրելու համար: Հյուրանոցային ծառայությունից Ընկերության հասույթը ստացվում է սովորաբար հաստատված գիշերային վճարից, ինչպես նաև լրացուցիչ հաստատագրված վճարներից՝ գնված ցանկացած օժանդակ ծառայությունների համար: Սովորաբար պարտավորությունների կատարումը առաջանում են հյուրի դուրս գրվելու պահին: Մատուցված ծառայությունների դիմաց վճարները հիմնականում կատարվում են այն ժամանակ, երբ հյուրը դուրս է գրվում հյուրանոցից: Ընկերությունն ընդհանուր առմամբ սենյակների վաճառքից և այլ օժանդակ ծառայություններից ստացված եկամուտը ճանաչում է օրվա կտրվածքով՝ ելնելով գիշերակացից և այլ մատուցված ծառայություններից: Ելնելով վերոգրյալից, Ընկերությունը հյուրանոցային ծառայություններից հասույթը ճանաչում է ժամանակի ընթացքում:

**Տարածքների վարձակալություն**

Ընկերությունը՝ հաճախորդների հետ պայմանագրերի հիման վրա, տրամադրում է տարածքներ: Նման պայմանագրերը կնքվում են նախքան հյուրանոցային օբյեկտների շինարարությունը սկսելը: Ընկերությունը պայմանագրորեն սահմանափակված է կառուցվող գույքը այլ հաճախորդին հանձնելու, ինչպես նաև իրավունք է ձեռքբերում կատարված աշխատանքի դիմաց վճարման ենթակա գումարի նկատմամբ: Ուստի հյուրանոցային համալիրի շինարարությունից ստացված եկամուտը ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ըստ ավարտվածության աստիճանի, ելնելով կատարված աշխատանքների համար կրած ծախսերի համամասնությունից:

**Ֆինանսական ակտիվներ**

Ընկերությունը իր ֆինանսական ակտիվները դասակարգում է ներքո ներկայացված կատեգորիաներից մեկով՝ կախված այն նպատակից, որի համար ակտիվը ձեռք է բերվել:

**Ամորտիզացված արժեքով չափվող**

Այս ակտիվները հիմնականում առաջանում են հաճախորդներին ապրանքների եւ ծառայությունների մատուցումից (օրինակ՝ առեւտրային դեբիտորական պարտքեր), ինչպես նաև ներառում են այլ ֆինանսական ակտիվներ, որոնց նպատակն է այդ ակտիվները պահել, պայմանագրային դրամական հոսքերի հավաքման նպատակով, իսկ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը իրենցից գուտ ներկայացնում են մայր գումարի և տոկոսների վճարումներ: Դրանք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, գումարած գործարքների գծով ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են դրանց ձեռքբերման կամ թողարկման հետ, եւ հետագայում դրանք չափվում են ամորտիզացված արժեքով, օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ նվազեցման արժեզրկման պահուստը:

Ընթացիկ եւ ոչ ընթացիկ առեւտրային դեբիտորական պարտքերի գծով վճարունակության ակնկալվող կորուստները գնահատելու նպատակով կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոտեցումը՝ օգտագործելով ողջ ժամկետի համար վճարունակության ակնկալվող կորուստների գնահատում: Այս գործընթացում գնահատվում է առեւտրային դեբիտորական պարտքերի չվճարման հավանականությունը: Այդ հավանականությունը, այնուհետեւ, բազմապատկվում է կանխատեսվող կորստի գումարի չափով՝ առեւտրային դեբիտորական պարտքերի ողջ ժամկետի գծով ակնկալվող կորստի գնահատման նպատակով:: Առեւտրային դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության հաստատման դեպքում, ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը հաշվանցվում է այդ ակտիվի գծով ձևավորված պահուստի հաշվին:

Կապակցված կողմերից դեբիտորական պարտքերի եւ կապակցված կողմերին տրամադրված փոխառությունների արժեզրկման պահուստները ճանաչվում են վճարունակության կորուստների ակնկալվող մոդելի հիման վրա: Պահուստի գումարի որոշման մեթոդաբանությունը հիմնված է այն հանգամանքի վրա, թե ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման պահից հետո արդյոք եղել է վճարունակության ռիսկի զգալի աճ: Այն ակտիվների համար, որոնց սկզբնական ճանաչման պահից հետո չի եղել է վճարունակության ռիսկի զգալի աճ, ճանաչվում է վճարունակության ռիսկի տասներկու ամսվա ակնկալվող կորուստները՝ համախառն տոկոսային եկամտի հետ միասին: Այն ակտիվների համար, որոնց վճարունակության ռիսկը զգալիորեն աճել է, ճանաչվում է ողջ ժամանակաշրջանի համար վճարունակության ռիսկի ակնկալվող կորուստ՝ համախառն տոկոսային եկամտի հետ միասին:

Ընկերության ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ներառում են առեւտրային եւ այլ դեբիտորական պարտքեր, ինչպես նաեւ դրամական միջոցները եւ դրանց համարժեքները: Դրամական միջոցները եւ դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցներ, ցպահանջ ավանդներ բանկերում, այլ կարճաժամկետ բարձր իրացվելի ներդրումներ, որոնց մարման սկզբնական ժամկետը չի գերազանցում երեք ամիսը, ինչպես նաև դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ բանկային օվերդրաֆտները:

Բանկային օվերդրաֆտները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են ընթացիկ պարտավորություններում վարկերի եւ փոխառությունների ներքո:

**Ֆինանսական պարտավորություններ**

Ընկերությունն իր ֆինանսական պարտավորությունները դասակարգում է երկու կատեգորիայի՝ պարտավորության ձեռքբերման նպատակին համապատասխան:
Ստորև ներկայացված է Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հաշվեկշռի ամսաթվին առկա յուրաքանչյուր կատեգորիայի համար, բացառությամբ հեջավորման պայմանը բավարարող ֆինանսական պարտավորությունների:

<u>Այլ ֆինանսական պարտավորություններ</u>

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են հետևյալը՝

- Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած դրանց ստացման ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Ժամանակաշրջանի տոկոսային ծախսերը հաստատուն դրույքով ներառվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության պարտավորություններ հոդվածում: Յուրաքանչյուր ֆինանսական պարտավորության նպատակներից ելնելով՝ տոկոսային ծախսերը ներառում են սկզբնական գործարքային ծախսերը, ետգնման վճարները, ինչպես նաև պարտավորությունների գծով վճարվելիք տոկոսները կամ արժեկտրոնները:
- Առևտրային կրեդիտորական և այլ կարճաժամկետ դրամային պարտավորությունները, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսային մեթոդը, եթե վերջինս էականորեն տարբերվում է սկզբնական արժեքից:

**Արտարժույթով գործարքներ**

Ընկերության ֆունկցիոնալ արժույթից բացի այլ արժույթով արտահայտված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ գերիշխող փոխարժեքով: Որոշակի ամսաթվի դրությամբ գերիշխող փոխարժեքների սահմանման դեպքում հղում է արվում ՀՀ կենտրոնական բանկի կայքում՝ www.cba.am, հրապարակված փոխարժեքներին: Դրամային ակտիվների և պարտավորությունների գծով փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են, բացառությամբ արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրումների հեջավորման պահանջներին համապատասխանող արտարժույթով արտահայտված փոխառությունների, որոնց դեպքում տարբերությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և վերափոխարկման հետևանքով առաջացած փոխարժեքային տարբերությունների հետ միասին կուտակվում են արտարժույթի փոխանակման պահուստում:

Վաճառքի համար մատչելի դրամային ակտիվների վերափոխարկման արդյունքում առաջացած փոխարժեքային տարբերությունները համարվում են իրական արժեքի փոփոխության առանձին տարր և ճանաչվում են շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ոչ դրամային ակտիվների գծով փոխարժեքային տարբերությունները կազմում են ֆինանսական գործիքի գծով ճանաչված ընդհանուր շահույթի կամ վնասի մասը:

Տարեվերջի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված պաշտոնական փոխարժեքները կազմում էին 404.79 դրամ 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ, 447.90դրամ 1 եվրոյի նկատմամբ, 4.50 դրամ 1 ՌԴ ռուբլու նկատմամբ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 393.57 դրամ 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ, 420.06 դրամ 1 եվրոյի նկատմամբ, 5,59դրամ 1 ՌԴ ռուբլու նկատմամբ):

Կանոնադրական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող ֆինանսական գործիքները դասակարգվում են որպես սեփական կապիտալ միայն այնքանով, որքանով դրանք չեն համապատասխանում ֆինանսական պարտավորությունների կամ ֆինանսական ակտիվների սահմանումներին:

Ընկերության սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալի գործիքներ:

**Հետաձգված հարկեր**

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է, որ կլինի հարկվող շահույթ, որի դիմաց այդ ժամանակավոր տարբերությունները հնարավոր կլինի օգտագործել:

Հետաձգված հարկային ակտիվները կամ պարտավորությունները չափվում են կիրառելով հարկային դրույքաչափեր, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ և ակնկալվում է, որ կկիրառվեն այն տարում, երբ հետաձգված հարկային պարտավորությունները/ (ակտիվները) կմարվեն/(կփոխհատուցվեն):

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա ընթացիկ հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցելու իրավունք, և հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Հիմնական միջոցների միավորի ինքնարժեքը ձեռքբերման արժեքից բացի ընդգրկում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները և հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման սկզբնապես գնահատված անխուսափելի ծախսումների գումարը:

Հողամասերն ու շենքերը հետագայում չափվում են իրական արժեքով՝ որակավորված մասնագետի կողմից կատարված պարբերական գնահատումների հիման վրա: Այդ վերագնահատումներն իրականացվում են բավարար հաճախականությամբ, որպեսզի հաշվեկշռային արժեքն էապես չտարբերվի հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ իրական արժեքից: Հողամասերի ու շենքերի վերագնահատումից առաջացած իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ եկամտում և կուտակվում են վերագնահատման պահուստում, բացառությամբ այն դեպքի, երբ արժեքի նվազումը գերազանցում է վերագնահատման պահուստի կրեդիտային մնացորդը (կամ նման գործարքի հակառակ տարբերակը). այս դեպքում գերազանցող մասը ճանաչվում է շահույթում կամ վնասում (փոփոխությունը կատարվել է 2016թ.):

Հողամասերի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Կառուցման ընթացքում գտնվող ակտիվների գծով մաշվածությունը սկսվում է հաշվարկվել, երբ ակտիվները ավարտուն են և պատրաստ օգտագործման:
Հիմնական միջոցների այլ միավորների գծով մաշվածությունը հաշվարկվում է օգտակար ծառայության ընթացքում դրանց հաշվեկշռային արժեքի դուրս գրման համար՝ օգտագործելով հետևյալ տոկոսադրույքները.

| Հիմնական միջոցներ | Օգտակար ծառայություն ամիս | Հաշվարկման մեթոդ |
|---|---|---|
| Շենքեր և շինություններ | 240 | Գծային |
| Մեքենաներ և սարքավորում | 60 | Գծային |
| Հարմարանքներ և սարքեր | 96 | Գծային |
| Տրանսպորտային միջոցներ | 96 | Գծային |
| Այլ հիմնական միջոցներ | 96 | Գծային |
| Համակարգչային տեխնիկա | 12 | Գծային |

**Պաշարներ**

Պաշարները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով, իսկ հետագայում չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, փոխարկման և պաշարները ներկայիս գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Համանման բնույթ և կիրառություն ունեցող բոլոր պաշարների ինքնարժեքի որոշման համար կիրառվում է ինքնարժեքի միջին կշռված արժեքի բանաձևը:

**Պահուստներ**

Ընկերությունը ճանաչել է ժամկետի կամ գումարի առումով անորոշ պահուստներ: Որպես պահուստ ճանաչված գումարը պետք է իրենից ներկայացնի հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ներկա պարտավորությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը: Զեղչման դրույքը պետք է լինի այն դրույքն՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

**Հարկեր**

Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է, որը հաշվարկվում է հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Շահութահարկը որոշելիս հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա՝ հաշվի առնելով ՀՀ հարկային օրենսգրքի նախատեսված առանձնահատկությունները:

Շահութահարկի հաշվարկման իմաստով հարկատուի շահույթը համախառն եկամտի և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:
**Վարձակալություն**

Բոլոր վարձակալությունները հաշվառվել են օգտագործման իրավունքի ձևով ակտիվի և վարձակալական պարտավորության ճանաչման միջոցով, բացառությամբ
- վարձակալությունների, որոնց հիմքում ընկած է փոքրարժեք ակտիվ, և
- կարճաժամկետ վարձակալությունների (12 ամիս և պակաս ժամկետով)

Վարձակալական պարտավորությունները չափվում են վարձակալության ժամկետի ընթացքում կատարվող պայմանագրային վարձավճարների ներկա արժեքով, զեղչված վարձակալությամբ ենթադրվող դրույքով, եթե այդ դրույքը հնարավոր է հեշտությամբ որոշել: Եթե ոչ (սովորաբար պատահող դեպքեր), հաշվարկը կատարվում է կիրառելով վարձակալի կողմից լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման դրույքով: Վարձակալության փոփոխուն վճարումները ներառվում են վարձակալական պարտավորության հաշվարկում, միայն եթե նրանք կախված են ինդեքսից կամ դրույքից: Այս դեպքում վարձակալական պարտավորության սկզբնական չափումը ենթադրում է այն, որ փոփոխուն մասը մնալու է կայուն վարձակալական ժամկետի ընթացքում: Այլ վարձակալական փոփոխուն վճարումները համարվում են ժամանակաշրջանի ծախսեր:

Հավելված 1 Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

| Հոդված | Իրական արժեք | Գնահատման մեթոդ | Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ | Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ |
|---|---|---|---|---|
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 206,273 | Ընթացիկ<br>Կարճաժամկետ (12 ամսից պակաս) դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին | Մակարդակ 3 | Կիրառելի չէ |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 26,610 | Ընթացիկ<br>Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին | Մակարդակ 3 | Կիրառելի չէ |

Արտաշես Թորոյան
Գլխավոր տնօրեն

Լուսինե Մուխոյան
Փորձագետ հաշվապահ